ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ 19.01.2026Թ. ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

19-ը փետրվարի 2026թ.. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո- 04

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ մրցութային խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

Հավելված
Մրցութային խորհրդի
2026թ. փետրվարի 19-ի
Թիվ ՄԽ-Ո- 04 որոշման

ԿԱՐԳ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կարգով կարգավորվում են Մրցութային խորհրդի կողմից (այսուհետ՝ Խորհուրդ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամի թափուր պաշտոնում թեկնածուների (այսուհետ՝ հավակնորդների) ընտրության կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային ստուգման և հարցազրույցի:

2. ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՓՈՒԼ

3. Փաստաթղթային ստուգման փուլում Խորհուրդը ստուգում է հավակնորդների փաստաթղթերի ամբողջականությունը, դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Խորհրդի որոշման հիման վրա ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) միջոցով ստացվում են նաև թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող հավելյալ տեղեկություններ:
4. Փաստաթղթերի թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում Աշխատակազմը մեկ օրվա ընթացքում հավակնորդին ծանուցում է այդ մասին՝ էլեկտրոնային փոստի հասցեով:
5. Փաստաթղթերի թերությունները հավակնորդը կարող է վերացնել փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված 20 օրյա ժամկետը լրանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում:
6. Սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու կամ կրկին ներկայացված փաստաթղթերը անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում Խորհուրդը եռօրյա ժամկետում կայացնում է որոշում հայտի ընդունումը մերժելու մասին, և այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում Աշխատակազմն էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցում է հավակնորդին:

7. Խորհրդի՝ հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը հավակնորդը կարող է դատական կարգով բողոքարկել մերժումն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելու դեպքում հավակնորդը կարող է մասնակցել մրցույթին: Հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հավակնորդն առանց նոր հայտ ներկայացնելու շարունակում է մասնակցել մրցույթին, իսկ եթե մրցույթն ավարտվել է, մասնակցում է նոր մրցույթի: Հայցը մերժվելու դեպքում հավակնորդը դուրս է մնում մրցույթից, իսկ եթե մասնակցել է որևէ փուլի, համարվում է չմասնակցած՝ անկախ արդյունքից:
8. Խորհուրդը, կատարելով փաստաթղթային ստուգման փուլի բոլոր գործողությունները, կազմում է հարցազրույցի փուլ անցած հավակնորդների ցուցակը:

3. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼ

9. Հարցազրույցը հավակնորդների հետ անցկացվող զրույցն է, որի նպատակն է բացահայտել հավակնորդների՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտությունների ու որակների առկայությունը:
10. Խորհուրդը հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:
11. Հարցազրույցի անցկացման վայրն է ՀՀ Ազգային ժողովը: Հարցազրույցն անցկացվում է Խորհրդի՝ այդ նպատակով հրավիրված նիստում:
12. Յուրաքանչյուր հավակնորդ նախապես հայտարարված ժամին ներկայանում է հարցազրույցի անցկացման վայր՝ անձը հաստատող փաստաթղթով:
13. Ներկայացած հավակնորդների ինքնության ստուգումն իրականացնում է Խորհուրդը: Անձը հաստատող փաստաթուղթ չներկայացրած հավակնորդի մասնակցությունը հարցազրույցին չի թույլատրվում:
14. Բացի տվյալ պահին հարցազրույցին մասնակցող հավակնորդից, այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել հարցազրույցի անցկացման սենյակում:
15. Հավակնորդները հարցազրույցի են հրավիրվում անհատապես՝ ըստ Խորհրդի կողմից կազմված ժամանակացույցի:
16. Հարցազրույցը կազմված է երկու մասից՝

    1) հավակնորդի մասնագիտական փորձի, անձնական որակների և հմտությունների ուսումնասիրություն.

    2) Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացության ուսումնասիրություն:
17. Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առաջին մասում Խորհրդի համապատասխան անդամը հանդես է գալիս հավակնորդի վերաբերյալ զեկույցով:

Զեկուցողների ընտրությունը Խորհրդում կատարվում է հավասարաչափ բաշխման և պատահական ընտրության սկզբունքով՝ վիճակահանությամբ:

18. Հավակնորդների վերաբերյալ զեկույցը ներառում է հավակնորդի կենսագրությունը, մասնագիտական փորձը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով նրա վերաբերյալ ստացված տեղեկությունները:
19. Խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին, որից հետո հավակնորդին տրվում է ներկայացված տեղեկությունների վերաբերյալ պարզաբանումներ տալու հնարավորություն:
20. Խորհրդի անդամները կարող են հարցեր տալ հավակնորդին Հանձնաժողովի անդամի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ անձնական հմտություններն ու որակները գնահատելու, Հանձնաժողովի անդամ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը պարզելու նպատակով: Խորհուրդն իրավասու է նաև հավակնորդից պարզաբանումներ պահանջելու բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացված տվյալների վերաբերյալ:
21. Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացության ստուգումը կատարվում է հրապարակված Հարցարանի հարցերը վիճակահանությամբ հավակնորդի կողմից ընտրելու միջոցով:
22. Խորհրդի նիստը նախագահողը հավակնորդին առաջարկում է վիճակահանությամբ ընտրել երկու հարց (այսուհետ՝ Հարցեր) պարունակող հարցաթերթ:
23. Հարցերին պատասխանելուն պատրաստվելու համար հավակնորդին տրամադրվում է 30 րոպե ժամանակ: Պատրաստ լինելուն պես հավակնորդն իրավունք ունի ներկայացնելու իր պատասխանը՝ անկախ պատրաստվելու համար հատկացված ժամանակը լրացած լինելու հանգամանքից:
24. Հավակնորդի կողմից հարցի պատասխանը ներկայացնելուց հետո Խորհրդի անդամները ներկայացված պատասխանի վերաբերյալ կարող են հարցեր տալ հավակնորդին:
25. Հարցազրույցի ժամանակ Խորհրդի անդամներին տրամադրվում է Խորհրդի որոշմամբ սույն կարգի 16-րդ կետին համապատասխան երկու մասից բաղկացած, հաստատված ձևի հարցաթերթ:
26. Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ հավակնորդին գնահատում է յուրաքանչյուր չափորոշիչով՝ հարցաթերթում, ըստ անհրաժեշտության, նշելով նաև իր նկատառումները գնահատվող յուրաքանչյուր հատկանիշի վերաբերյալ:
27. Մրցույթի արդյունքում հավակնորդը կարող է ստանալ առավելագույնը 100 միավոր, որից 60 միավորը մասնագիտական փորձի, անձնական որակների և հմտությունների համար, իսկ 40-ը՝ Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացության:

28. Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է: Հարցազրույցի՝ իրեն վերաբերող մասի ավարտից հետո հավակնորդը դուրս է հրավիրվում հարցազրույցի անցկացման սենյակից:
29. Հարցազրույցի ողջ ընթացքը տեսաձայնագրվում է Աշխատակազմի կողմից:

4. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

30. Բոլոր հավակնորդների հարցազրույցների ավարտից հետո Խորհրդի անդամներն իրականացնում են հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում:
31. Հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկումն իրականացվում է դռնփակության պայմաններում՝ բացառապես Խորհրդի անդամների մասնակցությամբ:
32. Հաղթող է ճանաչվում հարցազրույցի փուլի համար նախատեսված անցողիկ միավորի շեմը հաղթահարած այն հավակնորդը, որը խորհրդի ներկա անդամների՝ մասնակիցներին տված միավորների հանրագումարի արդյունքով ստացել է առավելագույն միավոր:
33. Հավակնորդը համարվում է հարցազրույցի փուլի համար նախատեսված անցողիկ միավորի շեմը հաղթահարած, եթե խորհրդի ներկա անդամների տված միավորների հանրագումարի արդյունքով ստացել է հնարավոր առավելագույն միավորի կեսից ավելին:
34. Եթե հավակնորդներից ոչ մեկը չի հաղթահարում հարցազրույցի փուլի համար նախատեսված անցողիկ շեմը, ապա մրցույթի արդյունքներով հաղթող չի ճանաչվում:
35. Եթե հավակնորդների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթող թեկնածուին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն հավակնորդի օգտին:
36. Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
37. Քվեարկության արդյունքներով ընտրված է համարվում առավել ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է մասնագիտական աշխատանքի առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ տարիքով ավագին:
38. Խորհուրդը Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ իր որոշումը, իսկ Հանձնաժողովի մեկից ավելի անդամների պաշտոններում թեկնածուներ ընտրելու վերաբերյալ իր որոշումը և թեկնածուների ցուցակը, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում Աշխատակազմի միջոցով ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: